ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՂՈՒՐՍԱԼԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության
Լոռու մարզի Ղուրսալի համայնք
հասցե - գ. Ղուրսալ 093-58-62-76
էլ. փոստ ghursali.lori@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

« 05 » դեկտեմբերի 2019 թվականի թիվ 27

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՂՈՒՐՍԱԼԻ ՀԱՄԱՅՆՔԻ 1Փ. 39 ՏՆԱԿ ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ, ԲՆԱԿԵԼԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՌՈՒՍԼԱՆ ՎԱԼԵՐԻ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆԻ ԸՆՏԱՆԻՔԻ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին և 3-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի նոյեմբերի 13-ի թիվ 1328-Ն և Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2378-Ն որոշումներով, հաշվի առնելով, Ռուսլան Վալերի Բաղդասարյանի ընտանիքի կողմից տիրապետվող ՀՀ Լոռու մարզի Ղուրսալի համայնքի 1փ. 39 տնակ հասցեում գտնվող 06-068-0017-0004 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման հողամասի մակերեսը կազմում է 0.16997 հա., հողամասը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 64-րդ հոդվածով սահմանված պահանջներին, ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում, հողամասի վրա 1990 թվականին կառուցված բնակելի տունը կառուցված է քաղաքաշինական նորմերի ու կանոններին համապատասխան, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, դրանց պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, հիմք ընդունելով «Արտյոմ Սաքանյան» Ա/Ձ-ի կողմից տրված անշարժ գույքի չափագրման հաշվետվությունը և Ռուսլան Վալերի Բաղդասարյանի դիմումը

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Վերականգնել և օրենքի ուժով ճանաչել Ռուսլան Վալերի Բաղդասարյանի ծնված 27.09.1972թ., Արմեն Վալերի Բաղդասարյանի ծնված 27.01.1976թ. և Առնոլդ Վալերի Բաղդասարյանի ծնված 06.01.1978թ. ընդհանուր համատեղ սեփականության իրավունքը Ղուրսալի համայնքի 1 փ. 39 տնակ հասցեում գտնվող 06-068-0017-0004 կադաստրային ծածկագրով 0.16997 հա մակերեսով հողամասի և դրա վրա գտնվող 141.32 ք/մ մակերեսով բնակելի տան նկատմամբ՝ համաձայն հատակագծի:
2. Սույն որոշման 1-ին կետում նշված անշարժ գույքին տրամադրել Ղուրսալի համայնք 1 փ. 39 տուն հասցեն:
3. Սույն որոշումից ծագող իրավունքով և տրամադրված հասցեն ենթակա է պետական գրանցման:
4. Աշխատակազմին՝ սահմանված կարգով փոփոխություն կատարել հողային հաշվեկշռում, ֆինանսական և եկամուտների հավաքագրման բաժնի աշխատակցին՝ սահմանված կարգով փոփոխություն կատարել ամենամյա գույքագրման փաստաթղթերում:
5. Սույն որոշման կատարման հսկողությունը դնել աշխատակազմի քարտուղարի վրա:

ՂՈՒՐՍԱԼ ՀԱՄԱՅՆՔԻ

ՂԵԿԱՎԱՐ՝ Մ. ՄԻՆԱՍՅԱՆ